



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիւ. 098 - 280819

Վերջերս սահմանաբակ շրջանառութեան մէջ դրուած է՝ 24 Յուլիս 2019 թուակիր արձանագրութիւն մը, որ կը կրէ «Բաց նամակ Իւնէսկոյի տնօրէն՝ Օտրէյ Ազուլայ-ին» վերնագիրը:

Այս արձանագրութիւնը՝ թրքական եւ ատրպէյջանական ստոր քաղաքականութեան խեղաթիւրիչ եւ հակահայկական քարոզչական արշաւի մէկ այլ փորձութիւնն է՝ Արցախ - Ատրպէյջան օրինապէս չհաստատուած սահմանները ապօրինի կերպով հաստատելու յիմար միտումով: Իսկ ամենաւատը այն է, որ ան կը կատարուի դաւաճան հայանուն անհատներու կողմէ, որոնք իրենց հակահայկական յանձագործութիւններով արդէն հատեցին բոլոր սահմանները:

Ոմն յուլիս միքայէլյան, ինքզինք ինքնակոչած որպէս Արեւմտեան Հայաստանի «մշակոյթի նախարար», որը կը գործէ փաշաբէգեան-տէրսարգսեան հակա-Արեւմտեան Հայաստան յանձագործ ու դաւաճանական խմբակին մօտ, այսպէս կոչուած «իր բաց նամակով», եւ կարճ խելքով, իբրեւ թէ կը խօսի Ատրպէյջանի հայկական կոթողները ոչնչացնելու յանձագործութիւններուն մասին, ան ապօրինիօրէն Արցախի Հանրապետութեան եւ Ատրպէյջանի միջեւ սահմանագիծը որպէս կատարուած իրողութիւն կը փորձէ հաստատել, այդ ալ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան անունով: Մինչ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը՝ իր նախագահ Արմենակ Աբրահամեանի եւ վարչապետ Գառնիկ Սարգիսեանի պաշտօնական յայտարարութիւններով, բազմիցս շեշտած է որ Արցախի Հանրապետութեան եւ Ատրպէյջանի միջեւ սահմանագիծը կ'որոշուի Սեւրի դաշնագրի 92-րորդ յօդուածի հիմքերով:

Ոչ միայն սուտի՝ այլ դաւաճանութեան պարանն ալ կարճ է: Ինքնակոչ դաւաճան եւ յանձագործ այս հակահայ (փաշաբէգեան-տէրսարգսեան) խմբակը, մօտ երկու տարի է որ հանդէս կուգայ որպէս «Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն», այսօր կ'իյնայ ինքն իր սարքած ծուղակին մէջ՝ հրապարակելով փաստաթուղթ մը որ արմատականօրէն կը հակադրուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ազգային եւ իրաւաքաղաքական հիմքերուն, մանաւանդ՝ Սեւրի դաշնագրին:

Երբ դաւաճան մը ազատօրէն աջ ու ձախ թոյն կը թափէ եւ յիմար ու անխոհեմ, յանձագործութեան աստիճան վնասներ կը հասցնէ ազգին, եւ պատասխանատուութեան չ'ենթարկուիր, օրը կուգայ, որ ան կամայ թէ ակամայ կը դառնայ թշնամիի հլու հնազանդ կամակատարը:

Ամեն դաւաճան ունի իր տխուր վախճանը, թէկուզ նոյնիսկ իր սեփական ձեռքերով:

Նման ազգադաւադիր արարքները միանգամայն կանխարգիլելու նպատակով՝ Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը կը յայտարարէ հետեւեալը.

1. Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը անգամ մը եւս կը հաստատէ իր **ազգային, սկզբունքային, իրաւա-քաղաքական դիրքորոշումը**՝ Արցախի Հանրապետութեան եւ Ատրպէյջանի միջեւ սահմանագիծին վերաբերեալ, որ հիմնուած է միայն ու միայն **Սեւրի դաշնագրի 92-րորդ յօդուածին վրայ**:
2. Իւրաքանչիւր կողմ, որ **ապօրինի** կերպով կը գործածէ Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի հեղինակութիւնը՝ **կ'ենթարկուի համապատասխան պատասխանատուութեան**: Նոյն պատասխանատուութեան պիտի ենթարկուին նաեւ Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի հեղինակութիւնը ապօրինաբար չարաշահող նման յանցագործներուն հետ **բոլոր մեղակիցները**:

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կարչապետ

Երեւան, 28 Օգոստոս 2019